ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի օգոստոսի 9-ի նիստի «2011 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 43

Իրական հատվածի ցուցանիշներ 46

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 49

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 54

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 55

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 67

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 89
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 101
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 103
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 109
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (09.08.2011)

2011 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի օգոստոսի 9-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը,
խորհրդի անդամներ Ա. Դարբինյանը, Ա. Նորեկյանը, Ա. Մկրտչյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թվականի հուլիսին 12-ամսյա գնաճը, դրամավարկային քաղաքականության ծրագրով նախանշված ուղղություններին համահունչ, շարունակել է նվազել բարձր տեմպերով. նախորդ ամսվա համեմատությամբ 2.2 տոկոսային կետով նվազման արդյունքում այն կազմել է 6.3%: Չնայած դրան, գնաճի կառուցվածքում պահպանվել է պարենային ապրանքների գների աճի գերակշռող ազդեցությունը (նպաստումը հուլիսի 12-ամսյա գնաճին՝ 5.1 տոկոսային կետ): Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների նպաստումը գնաճին կազմել է համապատասխանաբար 0.5 և 0.7 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի հուլիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 3.0% գնանկում, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորվել է պարենային ապրանքների գների 5.4%-ով նվազմամբ (նպաստումը գնանկմանը՝ 2.9%)՝ ի հաշիվ «Միրգ» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերում գների համապատասխանաբար 23.3% և 34.9% անկման: Ոչ պարենային ապրանքների գները մնացել են անփոփոխ, իսկ ծառայությունների սակագների որոշակի նվազումը նպաստել է գնանկմանը 0.07 տոկոսային կետով:

2011 թ. հուլիսին միջազգային շուկաներում հիմնական պարենային ապրանքների գները շարունակել են դրսևորել հարաբերական կայունացման միտում, թեև ԱՄՆ պարտքի առաստաղի փոփոխության և բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականության հնարավոր լուծումների վերաբերյալ անորոշությունների և Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների ուղղությամբ դեռևս պահպանվող լարվածության պայմաններում նավթի, արդյունաբերական և թանկարժեք մետաղների գների տատանողականությունը մեծացել է: Միաժամանակ, 2011 թ. հուլիսին և օգոստոսի սկզբին միջազգային ֆինանսական շուկաներում արձանագրվել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների և ֆոնդային ինդեքսների բարձր տատանողականություն: Այս պայմաններում հուլիսին ԱՄՆ դոլարը արժևորվել է եվրոյի նկատմամբ միջինը շուրջ 1%-ով:

Հաշվի առնելով ԱՎԾ կողմից հրապարակված 2011 թ. երկրորդ եռամսյակի տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ ՀՆԱ-ի աճի տեմպը հունիսի վերջին գնահատվել է 3.9-5.0%՝ պայմանավորված արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում ավելացված արժեքների գնահատված՝ համապատասխանաբար 15% և 4.2% աճով: Գյուղատնտեսության ճյուղում գնահատվում է ավելացված արժեքի գրեթե անփոփոխ մակարդակ, որը պայմանավորված է անասնապահության թողարկման ծավալների անկման պարագայում բուսաբուծության ենթաճյուղի աճով: Այդուհանդերձ, մինչև տարեվերջ գյուղատնտեսության ճյուղում պահպանվում են թողարկման ծավալների աճի

ակնկալիքները: Շինարարության ճյուղի ավելացված արժեքի գծով գնահատվում է շուրջ 4.6%-ով նվազում:

Ըստ արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշների՝ երկրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման արժեքային աճը գերազանցել է սպասումները՝ արձանագրելով տ/տ 23.2% աճ. ապրանքների և ծառայությունների ներմուծման արժեքն աճել է տ/տ 12.6%-ով: Աճի բարձր տեմպեր են արձանագրվել նաև ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքի գծով:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի հուլիսի զարգացումները. դրամավարկային պայմանների տարեսկզբի խստացմանը շարունակել է արձագանքել ռեպո շուկան, որտեղ միջին տոկոսադրույքը հունիսի համեմատությամբ աճել է 0.38 տոկոսային կետով՝ կազմելով 10.57%, իսկ միջբանկային ռեպո շուկայում միջին տոկոսադրույքը ավելացել է 0.31 տոկոսային կետով՝ կազմելով 9.91%: Միաժամանակ, ՊՊ առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատ նկատվել է տոկոսադրույքների նվազման միտում, մասնավորապես՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 0.93 տոկոսային կետով՝ կազմելով 8.69 %:

2011 թ. հուլիսին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 2.36 %-ով՝ կազմելով 366.00 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 3.01 %-ով՝ կազմելով 523.52 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 1.83 %-ով՝ կազմելով 13.15 դրամ:

Դրամավարկային ցուցանիշների հուլիսին արձանագրված միտումները հիմնականում համահունչ էին դրամավարկային քաղաքականության վերջին ծրագրով երրորդ եռամսյակի համար նախանշված ուղղություններին: Ամսվա ընթացքում փողի զանգվածն աճել է 3.3%-ով՝ բացառապես պայմանավորված շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների համապատասխանաբար 5.7% և 8.8% աճով: Դոլարային ավանդների նվազման և դրամային ավանդների բարձր աճի պայմաններում դոլարայնացման մակարդակը շարունակել է կրճատվել: Բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման աճը հուլիսին կազմել է շուրջ 0.5%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Խորհուրդն արձանագրեց, որ դրամավարկային ծրագրում նախանշված գնահատականներին համահունչ ընդհանուր գնաճային միջավայրը մեղմվել է՝ պայմանավորված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մակրոտնտեսական զարգացումներով: Պարենային ապրանքների միջազգային շուկաներում վերջին մի քանի ամիսներին նկատվող գների կայունացման միտումը շարունակել է պահպանվել, թեև համաշխարհային տնտեսությունում վերջերս ձևավորված պարտքային հիմնախնդիրները որոշակիորեն մեծացրել են հումքային և ֆոնդային շուկաներում գնային տատանողականությունը՝ անորոշություններ ստեղծելով զարգացած երկրների մակրոտնտեսական քաղաքականության հետագա ուղղությունների առումով:

Խորհուրդը համակարծիք է, որ տարեսկզբին իրականացված դրամավարկային պայմանների խստացումը, զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը և մասնավոր ծախսումների դանդաղ տեմպերով վերականգնումը շարունակելու են նպաստել գնաճի տեմպերի հետագա նվազմանը:

Խորհուրդն ամփոփեց, որ միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների կայունացման միտումները և ներքին տնտեսության ներկա զարգացումները, որոնք հիմնականում համահունչ են վերջին դրամավարկային ծրագրով նախանշված ուղղություններին, ինչպես նաև նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսու-

թյան ճյուղում ավելի բարենպաստ պայմանների պահպանումը նպաստելու են 12-ամսյա գնաճի նվազման տեմպերի հետագա արագացմանը: Այս պայմաններում ակնկալվում է, որ տարեվերջին 12-ամսյա գնաճը կձևավորվի 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում՝ կանխատեսվող հորիզոնում կայունանալով միջակայքի ստորին հատվածում: Չնայած նշված միտումներին, հաշվի առնելով համաշխարհային տնտեսության վերը նկարագրված հիմնախնդիրներով պայմանավորված ռիսկերն ու անորոշությունները՝ ԿԲ խորհուրդը ձեռնպահ մնաց դրամավարկային պայմանների թուլացումից:

Դրամավարկային քաղաքականության ուղղության փոփոխությանը ԿԲ խորհուրդը կանդրադառնա առաջիկա նիստում՝ ելնելով արտաքին մակրոտնտեսական զարգացումների հետ կապված ռիսկերի և անորոշությունների ընթացիկ գնահատումներից, ինչպես նաև ՀՀ տնտեսության վրա վերջիններիս ազդեցության վերլուծությունից:

2011 թվականի օգոստոսի 9-ի նիստում Խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.5%, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները համապատասխանաբար սահմանել 11.5% և 5.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2011թ. հունիս*	*2011թ. հունիսի իրական աճի ինդեքսը 2010թ. հունիսի նկատմամբ (%)*	*2011թ. հուլիս*	*2011թ. հուլիսի իրական աճի ինդեքսը 2010թ. հուլիսի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	102.3	-	107.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	87199	124.7	78165.4	110.2
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	637.4	116.4	662.4	113.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	66332.9	110.1	96577.0	132.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	163264.6	106.0	165961.8	105.9
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	39745.9	68.7	35071.7	67.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	73096.6	104.1	78474.0	105.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	114138[1]	96.6[2]	120836[1]	100.3[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1205.7	-	1214.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	75.2	-	73.6	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.2	-	6.1	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4[1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9[1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
Ապրիլ	99.8	100.3	104.2	102.0
Մայիս	100.0	98.7	97.9	97.4
Հունիս	98.6	100.1	100.4	86.1
Հուլիս	97.0	94.0	98.9	78.5
2011 թ. հունվար – հուլիսը 2010 թ. հունվար – հուլիսի համեմատությամբ	109.4	111.7	100.2	125.5

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4 [1]	3.4 [1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9 [1]	0.9 [1]	11.4 [1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3	-0.2	5.0	8.9
Մայիս	1.6	1.0	0.0	5.0	9.0
Հունիս	-0.3	-0.8	-1.4	3.5	8.5
Հուլիս	-2.7	-0.8	-3.0	0.4	6.3
Օգոստոս	-0.4	1.3			
Սեպտեմբեր	0.7	-0.2			
Հոկտեմբեր	0.5	1.0			
Նոյեմբեր	1.2	1.6			
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՃԻ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [2]

Անվանում	*2011 թ. հուլիսը 2011 թ. հունիսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [2]
ՍԳԻ	**97.0**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**94.6**	**-2.89**
Բանջարեղեն և կարտոֆիլ	65.1	-2.19
Միրգ	76.7	-0.85
Հացամթերք	99.4	-0.06
Կաթնամթերք	98.6	-0.06
Մսամթերք	102.9	0.30
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.0**	**0.00**
Մշակույթի ապրանքներ	98.3	-0.01
Հագուստ և գործվածք	99.8	-0.01
Կոշկեղեն	99.6	-0.01
Ծառայություններ, որից՝	**99.8**	**-0.06**
Տրանսպորտի	98.7	-0.04
Բնակարանային, կոմունալ	99.7	-0.04
Հանգստի կազմակերպման	95.4	-0.03
Բուժսպասարկման	100.6	0.02
Հանրային սննդի	101.0	0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2008	2009	2010	2011
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.78[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.45[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.70
Ապրիլ	1.26	1.46	0.70	0.44
Մայիս	0.55	0.41	0.04	0.33
Հունիս	0.30	0.25	-0.22	0.43
Հուլիս	0.02	-0.22	-0.42	0.21
Օգոստոս	0.06	0.37	0.17	
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.77[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	6.21[4]
Մարտ	4.54	3.33	7.14	6.20
Ապրիլ	5.66	3.47	6.35	5.78
Մայիս	5.94	3.37	5.92	6.09
Հունիս	6.47	3.36	5.40	6.72
Հուլիս	6.75	3.20	5.16	7.36
Օգոստոս	6.97	3.52	4.96	
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**7.36**
Տավարի միս	1.0
Չու	0.9
Պանիր տնական (կովի կաթից)	0.7
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.4
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.4
Բենզին	0.4
Կարագ	0.4
Շաքարավազ	0.3
Պանիր «Չանախ»	0.3
Խոզի միս	0.2
Բուսական յուղ (արևածաղկի)	0.2
Պանիր «Լոռի»	0.1
Աղացած միս	0.1
Աղացած սև սուրճ	0.1
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների՝ կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.1

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվանում	*2011 թ. հունվար – հունիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – հունիսը 2010 թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար – հուլիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – հուլիսը 2010 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	603.3	131.1	709.5	131.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	1894.6	111.0	2196.3	108.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1291.4	103.6	1486.8	100.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – հուլիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	515796	80932	434864	1114114	172036	942078
ԱՄՆ	71203	58507	12696	124426	108425	16001
Ուկրաինա	10964	13070	-2106	20197	20724	-527
Ղազախստան	10034	1971	8063	19845	3082	16763
Գերմանիա	11809	12485	-676	21175	23861	-2686
Իսպանիա	4440	6133	-1693	8368	10834	-2466
Ֆրանսիա	9003	7248	1755	17062	18774	-1711
ԱՄԷ	14204	29145	-14941	26198	55500	-29303
Չինաստան	1053	41126	-40072	2068	80011	-77943
Թուրքիա	1336	20961	-19624	2639	40547	-37909
Այլ երկրներ	127102	108967	18135	270964	197761	73203
Ընդամենը	**776945**	**380544**	**396400**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	141380	13356	128024	671014	93724	577291
ԱՄՆ	12123	16893	-4770	68954	70199	-1245
Ուկրաինա	3333	2565	768	16485	14974	1511
Ղազախստան	2052	140	1912	11987	1410	10577
Գերմանիա	2264	1894	370	15138	14790	348
Իսպանիա	1173	1123	50	5772	4995	777
Ֆրանսիա	1324	2111	-787	10312	14751	-4439
ԱՄԷ	1376	4038	-2662	12847	31529	-18682
Չինաստան	305	6922	-6617	1958	40948	-38990
Թուրքիա	347	3115	-2768	2844	20349	-17504
Այլ երկրներ	21962	19995	1967	173237	117104	56133
Ընդամենը	**187640**	**72153**	**115487**	**990550**	**424773**	**565777**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – հուլիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	493803	59228	434575	1062266	116950	945316
ԱՄՆ	35794	13712	22082	67789	24554	43235
Ուկրաինա	10671	8120	2551	19290	13433	5857
Ղազախստան	9202	441	8761	18434	1021	17414
Գերմանիա	6241	3398	2843	10586	5346	5240
Իսպանիա	3816	1118	2698	7232	2286	4946
Ֆրանսիա	5481	1888	3593	9443	3731	5712
ԱՄԷ	1699	4060	-2361	3581	6904	-3323
Չինաստան	340	3167	-2827	789	5970	-5181
Թուրքիա	573	3754	-3180	1182	6246	-5064
Այլ երկրներ	50380	20318	30062	93144	35323	57821
Ընդամենը	**618000**	**119203**	**498797**	**1293736**	**221763**	**1071973**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	137858	10606	127252	632615	74822	557793
ԱՄՆ	5112	1804	3309	37911	14327	23584
Ուկրաինա	3216	1478	1738	15365	9501	5864
Ղազախստան	1700	139	1561	11106	1043	10063
Գերմանիա	786	626	159	6348	3549	2798
Իսպանիա	654	286	368	4426	1578	2848
Ֆրանսիա	861	451	410	6011	4731	1280
ԱՄԷ	332	608	-276	1770	3887	-2117
Չինաստան	30	822	-791	295	3709	-3413
Թուրքիա	71	397	-326	1316	2688	-1372
Այլ երկրներ	7833	3217	4616	55261	21361	33900
Ընդամենը	158453	20432	138021	772422	141195	631227





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ[1,2]

2010	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.0	137.8	135.7	135.7	134.7	132.1	134.7	138.6
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.8	223.4	235.0	233.1	231.4	232.5	221.7	228.9	232.8
2011	**Հ**	**Փ[3]**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ[3]**	**Հ[3]**	**Հ[3]**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.4	137.4	133.3	128.2	127.8	126.3	125.7					
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.8	211.8	216.4					

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:

[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000թ.=100)

[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների, որոնք ենթակա են հետագա ճշգրտման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011						
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**
Համախառն միջազգային պահուստներ	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	33.5	34.0	31.3	31.5	27.4	20.1	16.4	19.5
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1832.3	1783.0	1758.6	1791.9	1738.0	1687.4	1765.6	1856.2

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011						
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**699.9**	**710.5**	**714.2**	**721.7**	**734.1**	**719.5**	**716.6**	**744.4**
ԱՄՀ վարկ	487.9	495.3	497.5	502.3	509.1	497.9	495.1	523.2
ՀՓԻ տեղաբաշխում	135.6	137.6	138.5	139.6	142.7	140.9	140.9	140.9
Այլ վարկեր	75.9	77.3	77.9	79.3	81.6	80.1	80.0	79.3
Այլ պարտավորություններ	0.5	0.4	0.4	0.4	0.7	0.7	0.5	1.0


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարման կարճաժամկետ կապիտալ հաշիվներ և ավելցուկներ տարեվերջի դրությամբ	կենտրոնական կառավարման ժամանակացույցային հաշիվներ	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2010								
Դեկտեմբեր	12124	12124	106544	672	1	515	107733	**-95609**
2011								
Հունվար	12236	12236	135069	3168	1	515	138753	**-126517**
Փետրվար	13101	13101	112661	3238	1	521	116421	**-103320**
Մարտ	13608	13608	101877	3334	1	524	105736	**-92128**
Ապրիլ	15806	15806	99035	3458	2	525	103020	**-87214**
Մայիս	16719	16719	90922	3434	1	534	94891	**-78172**
Հունիս	14713	14713	94477	3377	1	523	97856	**-83143**
Հուլիս	14904	14904	111939	4208	1	515	116665	**-101761**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատկիչ [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2010										
Դեկտեմբեր	507552	304324	128365	432689	88944	521633	389753	911386	1.80	1.27
2011										
Հունվար	463214	275472	112972	388444	93352	481796	394639	876435	1.89	1.26
Փետրվար	482014	276563	117936	394500	100647	495147	399295	894442	1.86	1.21
Մարտ	506325	278219	126771	404990	103198	508188	417671	925859	1.83	1.22
Ապրիլ	499650	285286	114356	399642	107185	506827	416526	923353	1.85	1.18
Մայիս	488892	293994	124315	418309	108084	526393	422169	948562	1.94	1.23
Հունիս	520180	301855	135612	437467	110781	548248	426001	974249	1.87	1.25
Հուլիս	530588	317819	145661	463480	119885	583364	427974	1011338	1.91	1.24

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
540000
450000
360000
270000
180000
90000
0
08
09
10
11
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
05
06
07
08
09
10
11


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2010					
Հունվար	457685	259472	358736	416745	786819
Փետրվար	454592	263807	364495	426307	813713
Մարտ	481743	268524	362690	427897	826030
Ապրիլ	487664	269934	371903	435175	816383
Մայիս	468045	268863	374829	439881	809663
Հունիս	451251	270570	377333	445295	803968
Հուլիս	440056	266369	368734	439485	797370
Օգոստոս	435927	261879	368202	436157	789543
Սեպտեմբեր	431419	265420	373200	443501	801256
Հոկտեմբեր	435123	265816	374426	448448	813070
Նոյեմբեր	446763	269424	382503	458349	829154
Դեկտեմբեր	454628	276953	396429	477786	861865
2011					
Հունվար	462951	283399	399807	488359	883590
Փետրվար	485483	287137	404007	502933	901074
Մարտ	510185	300499	429155	536767	937147
Ապրիլ	514455	301550	423441	531265	941328
Մայիս	502408	308696	438441	549635	970128
Հունիս	531577	304447	436727	557528	977263
Հուլիս	535664	309033	453501	572453	1006786

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***453765***	***427700***	***414080***	***421131***	***387728***	***375129***	***403235***	***428520***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***53787***	***35514***	***67934***	***85194***	***111921***	***113763***	***116945***	***102068***
Կառավարություն	-95609	-126517	-103320	-92128	-87214	-78172	-83666	-101761
Բանկեր	57425	67249	67799	67220	88139	81801	86253	89258
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	8023	6040	6035	5034	20613	9198	10770	11534
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-12103	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0
Ձուլտ այլ ակտիվներ	91971	94782	103455	110102	110996	110134	114358	114570
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***507552***	***463214***	***482014***	***506325***	***499650***	***488892***	***520180***	***530588***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	348165	312940	312393	312420	319858	330646	338923	355492
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	57516	66614	94205	96027	103107	89876	89949	104595
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	88237	70189	62502	82272	63722	55821	76634	56636
Այլ հաշիվներ	13635	13471	12914	15606	12962	12549	14674	13864
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	3906	3664	3324	8590	6125	6479	11338	11362
Այլ հաշիվներ (արտարժույթով)	9729	9807	9590	7017	6837	6070	3336	2503
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-26065***	***-13620***	***7052***	***-33403***	***-12599***	***28106***	***25284***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-18273***	***32420***	***17260***	***26727***	***1842***	***3182***	***-14877***
Կառավարություն	-	-30908	23197	11193	4914	9042	-5494	-18094
Բանկեր	-	9824	550	-580	20919	-6337	4452	3006
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-1983	-5	-1001	15579	-11414	1572	764
ավանդներ (-)	-	-12103	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0	0	0	0	0
Ձուլտ այլ ակտիվներ	-	2811	8673	6647	895	-863	4225	212
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-44338***	***18800***	***24312***	***-6676***	***-10757***	***31288***	***10408***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-35225	-547	27	7438	10787	8277	16569
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	9098	27591	1822	7080	-13231	73	14646
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-18047	-7687	19770	-18550	-7900	20813	-19998
Այլ հաշիվներ	-	-164	-557	2692	-2644	-414	2125	-810
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-241	-340	5266	-2465	354	4859	24
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	78	-217	-2573	-180	-767	-2734	-833
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-5.7***	***-3.2***	***1.7***	***-7.9***	***-3.2***	***7.5***	***6.3***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34.0***	***91.3***	***25.4***	***31.4***	***1.6***	***2.8***	***-12.7***
Կառավարություն	-	-32.3	18.3	10.8	5.3	10.4	-7.0	-21.6
Բանկեր	-	17.1	0.8	-0.9	31.1	-7.2	5.4	3.5
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ձուլտ այլ ակտիվներ	-	3.1	9.2	6.4	0.8	-0.8	3.8	0.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-8.7***	***4.1***	***5.0***	***-1.3***	***-2.2***	***6.4***	***2.0***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-10.1	-0.2	0.0	2.4	3.4	2.5	4.9
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	15.8	41.4	1.9	7.4	-12.8	0.1	16.3
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-20.5	-11.0	31.6	-22.5	-12.4	37.3	-26.1
Այլ հաշիվներ	-	-1.2	-4.1	20.8	-16.9	-3.2	16.9	-5.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Ձուլտ միջազգային պահուստները (ՁՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ՁՄՊ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-229981**	**-213566**	**-227207**	**-257402**	**-258953**	**-283206**	**-298787**	**-286258**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	116970	135050	139764	122882	135571	130484	138657	149591
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-334274	-331946	-347569	-363026	-376647	-394130	-417561	-415396
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-12678	-16670	-19403	-17258	-17877	-19560	-19883	-20454
ԶՆԱ	**823007**	**806569**	**835898**	**893322**	**886732**	**927947**	**958239**	**967249**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	44671	43177	38039	40978	36341	33249	35292	40085
Պահանջներ Կառավարության նկատմամբ	126027	128142	123009	126234	124173	122349	121460	125990
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-81357	-84965	-84970	-85256	-87833	-89100	-86168	-85905
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	132318	107261	124915	145656	116189	107807	125060	118632
Պահանջներ ԿԲ նկատմամբ	201453	174044	192190	212227	203486	188576	210596	206053
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-69135	-66782	-67276	-66571	-87297	-80769	-85536	-87421
Տնտեսություն	921781	928020	954392	997174	1027111	1071626	1087433	1088157
Ջեռնարկություններ	516270	537700	554747	587393	604417	632739	641674	645241
Դրամով	140914	141458	144045	142151	142620	147197	151483	152833
Արտարժույթով	372274	393172	407609	442132	458667	482475	487107	490183
Արժեթղթեր	3081	3070	3092	3110	3129	3067	3085	2225
Տնային տնտեսություններ	374342	359466	368986	379268	389940	404577	409743	408505
Դրամով	239827	240583	245047	253843	262278	272256	276778	277240
Արտարժույթով	134515	118883	123939	125425	127662	132321	132965	131264
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	12191	12269	12808	12868	13142	12830	13155	12860
Դրամով	971	947	1119	1112	1110	1139	1158	1166
Արտարժույթով	11220	11322	11689	11756	12032	11691	11997	11694
Այլ ֆինանսական կազմակերպություններ	18979	18585	17851	17644	19612	21480	22861	21551
Դրամով	15755	15439	14562	14500	15358	16543	18366	19006
Արտարժույթով	3223	3146	3289	3144	4254	4937	4495	2545
Զուտ այլ ակտիվներ	-275763	-271888	-281448	-290485	-292908	-284735	-289546	-279625
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	23540	21413	24043	24115	24088	25085	25241	25331
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	22861	31078	36691	36909	38605	36434	31509	29448
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-20743	-29006	-36366	-36597	-38282	-36184	-31034	-29102
Ներդրումներ փայաբաժիններում	2320	2458	2489	2516	2561	2577	2648	2759
Միջբանկային պահանջներ	50498	40848	32517	41688	41430	58638	50543	45458
Այլ ակտիվներ	170554	162896	164395	170173	159882	184190	174530	172840
Միջբանկային պարտավորություններ (-)	-50133	-40594	-29120	-40412	-40939	-57550	-50202	-45135
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-9323	-5531	-5629	-5690	-5740	-5830	-5123	-5345
Կապիտալ հաշիվներ (-)	-320573	-320602	-326696	-336546	-338281	-336819	-341321	-341345
Այլ պարտավորություններ (-)	-144763	-134849	-143774	-146642	-136231	-155277	-146337	-134534
ԱՎԱՆԴՆԵՐ	**593025**	**593003**	**608691**	**635920**	**627779**	**644742**	**659452**	**680991**
Դրամով ավանդներ	212805	201800	212427	218917	211981	222728	230900	251307
Ցպահանջ ավանդներ	128070	112992	117722	123456	112992	122965	128197	139218
Ժամկետային ավանդներ	84735	88808	94706	95461	98990	99763	102704	112090
Արտարժույթով ավանդներ	380220	391203	396263	417003	415797	422014	428552	429683
Ցպահանջ ավանդներ	105179	103809	100544	119056	106711	109190	116638	129653
Ժամկետային ավանդներ	275041	287395	295719	297947	309086	312824	311913	300030

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-26185**	**-32256**	**-33352**	**-32137**	**-35605**	**-33844**	**-33307**	**-32141**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	162	178	199	1523	1138	1153	1220	1321
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-19716	-25702	-26108	-26288	-26600	-26641	-26284	-25081
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-6632	-6732	-7443	-7372	-10142	-8356	-8243	-8381
ԶՆԱ	**38574**	**44606**	**47704**	**47142**	**50767**	**49474**	**48969**	**48237**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-4704	-4662	-4962	-5209	-5450	-5627	-5616	-5808
Պահանջներ Կառավարության նկատմամբ	758	831	534	467	409	412	417	468
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-5462	-5494	-5496	-5676	-5859	-6039	-6033	-6277
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	19515	25859	26707	27755	27139	28021	27261	27394
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	21665	27766	28611	29822	29380	30674	30407	31211
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ (-)	-2150	-1908	-1905	-2066	-2241	-2653	-3146	-3817
Տնտեսություն	60105	59964	60984	64122	65314	66906	67495	67569
Ձեռնարկություններ	16644	16336	16221	16939	16759	17171	17041	17396
Դրամով	6905	6689	6770	7175	7262	7506	7535	7765
Արտարժույթով	9739	9648	9450	9764	9497	9665	9506	9621
Արժեթղթեր	0	0	0	0	0	0	0	10
Տնային տնտեսություններ	43311	43482	44618	47041	48423	49615	50331	49975
Դրամով	30195	30674	31657	33192	34187	34789	35571	35297
Արտարժույթով	13116	12808	12962	13849	14236	14826	14760	14678
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	132	129	128	126	117	105	110	86
Դրամով	60	60	58	57	56	55	94	72
Արտարժույթով	72	69	69	69	61	51	15	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ	18	17	17	16	15	14	13	112
Դրամով	11	11	10	10	9	9	8	108
Արտարժույթով	7	7	6	6	6	6	5	5
Զուտ այլ ակտիվներ	-36342	-36554	-35024	-39526	-36236	-39825	-40171	-40917
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	45	50	43	1745	48	12	7	13
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0	0	0	0
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ դրամ դրամարկղում	219	225	306	236	248	271	260	256
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678	1678	4	1678	1678	1678	1678
Պահանջներ վարկային կազմ-ների նկատմամբ	1526	1707	1647	1724	1900	2084	2277	2225
Այլ ակտիվներ	3332	3666	3738	3859	3604	3880	4000	4433
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-1552	-1623	-1630	-1724	-1900	-2028	-2277	-2225
Թողարկված պարտատոմսեր (-)	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ (-)	-36013	-36029	-36229	-41474	-37649	-41342	-40073	-40921
Այլ պարտավորություններ (-)	-5576	-6230	-4577	-3896	-4166	-4382	-6044	-6378
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**12388**	**12350**	**14352**	**15005**	**15163**	**15630**	**15662**	**16096**
Դրամով փոխառություններ	8430	8473	10391	11005	11151	11400	11643	11829
Ցպահանջ փոխառություններ	11	13	14	13	14	13	17	9
Ժամկետային փոխառություններ	8419	8460	10377	10992	11138	11387	11626	11820
Արտարժույթով փոխառություններ	3959	3877	3961	4000	4011	4231	4019	4267
Ցպահանջ փոխառություններ	71	71	70	76	95	98	97	90
Ժամկետային փոխառություններ	3888	3806	3891	3924	3916	4132	3922	4177

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ[6]	Հ	Փ	Մ[6]	Ա	Մ	Հ[6]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***197598***	***181877***	***153521***	***131593***	***93171***	***58080***	***71141***	***110121***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***713788***	***694558***	***740921***	***794267***	***830182***	***890482***	***903108***	***901217***
Կառավարություն	-55643	-88003	-70243	-56359	-56324	-50550	-53991	-67484
Տնտեսություն	980824	987150	1014549	1060360	1091312	1137046	1152938	1153089
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	532913	554036	570968	604333	621176	649910	658715	662637
որից՝ կուտակված տոկոսներ	7132	7476	7026	6986	7669	8682	8255	8583
Տնային տնտեսություններ	418233	403710	414392	427075	438948	454667	460482	458927
որից՝ կուտակված տոկոսներ	5586	6110	6137	6030	6094	6499	6418	6616
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	12323	12398	12935	12994	13259	12935	13265	12946
որից՝ կուտակված տոկոսներ	30	28	26	29	28	27	25	26
Այլ ֆինանսական կազմակերպություններ	17354	17006	16255	15958	17929	19534	20475	18579
որից՝ կուտակված տոկոսներ	42	50	44	33	45	55	52	56
Զուտ այլ ակտիվներ	-211393	-204589	-203385	-209734	-204807	-196014	-195839	-184388
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***521633***	***481796***	***495147***	***508188***	***506827***	***526393***	***548248***	***583364***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***911386***	***876435***	***894442***	***925859***	***923353***	***948562***	***974249***	***1011338***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	304324	275472	276563	278219	285286	293994	301855	317819
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով [5]	128365	112972	117936	126771	114356	124315	135612	145661
որից՝ կուտակված տոկոսներ	58	75	109	80	97	142	97	99
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	88944	93352	100647	103198	107185	108084	110781	119885
որից՝ կուտակված տոկոսներ	1859	1886	2060	2276	2413	2548	2559	2661
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	389753	394639	399295	417671	416526	422169	426001	427974
Ցպահանջ [5]	114590	112344	109198	125163	112316	113752	118686	126682
որից՝ կուտակված տոկոսներ	13	19	37	18	33	56	25	28
Ժամկետային	275163	282295	290098	292507	304210	308417	307314	301292
որից՝ կուտակված տոկոսներ	4259	4598	4108	4134	4292	4626	4575	4676
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-15721***	***-28356***	***-21929***	***-38422***	***-35091***	***13061***	***38980***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-19230***	***46363***	***53345***	***35915***	***60300***	***12626***	***-1891***
Կառավարություն	-	-32360	17760	13884	35	5774	-3441	-13493
Տնտեսություն	-	6326	27400	45811	30952	45734	15892	152
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	21123	16932	33365	16844	28734	8805	3921
որից՝ կուտակված տոկոսներ	-	344	-450	-41	684	1013	-426	327
Տնային տնտեսություններ	-	-14523	10682	12683	11873	15719	5815	-1555
որից՝ կուտակված տոկոսներ	-	525	27	-107	63	405	-81	198
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	75	538	59	265	-324	330	-319
որից՝ կուտակված տոկոսներ	-	-2	-3	3	-1	-1	-2	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-349	-751	-297	1971	1605	942	-1896
որից՝ կուտակված տոկոսներ	-	8	-6	-11	12	10	-3	4
Զուտ այլ ակտիվներ	-	6804	1204	-6349	4928	8793	175	11451
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-39837***	***13351***	***13041***	***-1362***	***19566***	***21856***	***35116***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-34951***	***18007***	***31417***	***-2506***	***25209***	***25687***	***37089***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-28852	1091	1656	7067	8708	7861	15964
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-15393	4965	8834	-12415	9959	11297	10049
որից՝ կուտակված տոկոսներ	-	18	34	-29	17	44	-45	2
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	4408	7295	2551	3987	899	2698	9103
որից՝ կուտակված տոկոսներ	-	27	174	217	137	135	11	103
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	4886	4656	18375	-1145	5643	3832	1973
Ցպահանջ	-	-2246	-3146	15966	-12848	1437	4934	7996
որից՝ կուտակված տոկոսներ	-	6	18	-19	14	23	-31	3
Ժամկետային	-	7132	7802	2410	11703	4206	-1102	-6022
որից՝ կուտակված տոկոսներ	-	339	-490	26	158	334	-51	101

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-8.0***	***-15.6***	***-14.3***	***-29.2***	***-37.7***	***22.5***	***54.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-2.7***	***6.7***	***7.2***	***4.5***	***7.3***	***1.4***	***-0.2***
Կառավարություն	-	-58.2	20.2	19.8	0.1	10.3	-6.8	-25.0
Տնտեսություն	-	0.6	2.8	4.5	2.9	4.2	1.4	0.0
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	4.0	3.1	5.8	2.8	4.6	1.4	0.6
Տնային տնտեսություններ	-	-3.5	2.6	3.1	2.8	3.6	1.3	-0.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	0.6	4.3	0.5	2.0	-2.4	2.5	-2.4
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-2.0	-4.4	-1.8	12.4	8.9	4.8	-9.3
Զուտ այլ ակտիվներ	-	3.2	0.6	-3.1	2.3	4.3	0.1	5.8
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-7.6***	***2.8***	***2.6***	***-0.3***	***3.9***	***4.2***	***6.4***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-3.8***	***2.1***	***3.5***	***-0.3***	***2.7***	***2.7***	***3.8***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-9.5	0.4	0.6	2.5	3.1	2.7	5.3
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-12.0	4.4	7.5	-9.8	8.7	9.1	7.4
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	5.0	7.8	2.5	3.9	0.8	2.5	8.2
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	1.3	1.2	4.6	-0.3	1.4	0.9	0.5
Ցպահանջ	-	-2.0	-2.8	14.6	-10.3	1.3	4.3	6.7
Ժամկետային	-	2.6	2.8	0.8	4.0	1.4	-0.4	-2.0

[1] Ընդգրկված են ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:

[2] ԶԱԱ-ն իրենից ներկայացնում է փոխարկելի արտարժույթով ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: Կենտրոնական բանկի ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 385 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՍԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները:

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները, արտարժութային ավանդներն ու փոխառությունները:

[5] Ներառյալ հաշիվները:

[6] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ	Հ	Փ [1]	Մ [1]	Ա [2]	Մ [2]	Հ [1]	Հ [1]
ԶԱԱ	**247**	**68**	**256**	**135**	**560**	**571**	**801**	**841**
Արտաքին ակտիվներ արտարժույթով	268	272	279	161	581	593	825	866
Արտաքին պարտավորություններ արտարժույթով (-)	-7	-6	-8	-11	-6	-6	-6	-8
Արտաքին պարտավորություններ դրամով (-)	-14	-199	-14	-15	-15	-16	-17	-18
ԶՆԱ	**9102**	**14640**	**12085**	**11808**	**9600**	**8973**	**9293**	**9169**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	2221	3087	2957	2925	2029	1988	2511	2422
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	16822	18113	15115	14731	12537	12298	13194	12805
Տնտեսություն	844	882	890	979	1142	1181	1170	1286
Ձեռնարկություններ	424	494	531	552	713	752	725	755
Դրամով	217	219	241	253	256	267	270	275
Արտարժույթով	68	137	151	161	346	374	370	366
Արժեթղթեր	139	138	139	138	110	111	85	113
Տնային տնտեսություններ	217	135	55	116	117	116	132	194
Դրամով	144	135	55	116	117	116	132	194
Արտարժույթով	73	0	0	0	0	0	0	0
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	0	0	0	0	0	0	0	0
Դրամով	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	203	253	304	311	313	313	313	338
Դրամով	179	229	279	287	288	288	313	338
Արտարժույթով	24	24	24	24	24	25	0	0
Զուտ այլ ակտիվներ	-10786	-7441	-6877	-6826	-6110	-6495	-7582	-7344
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1	1	1	1	67	68	69	69
ՀՀ դրամ դրամարկղում	331	148	193	27	15	20	27	25
Ներդրումներ փայաբաժիններում	0	0	0	0	0	35	35	35
Պահանջներ ապահովագրական ընկերությունների նկատմամբ	0	0	0	0	0	0	0	0
Այլ ակտիվներ	5370	9886	8667	9356	8050	7952	9074	9240
Պարտավորություններ ապահովագրական ընկերությունների նկատմամբ (-)	0	0	0	0	0	0	0	0
Թողարկված պարտատոմսեր (-)	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ (-)	-12506	-13400	-12980	-13441	-11888	-12104	-13884	-13763
Այլ պարտավորություններ (-)	-3982	-4076	-2758	-2769	-2354	-2465	-2903	-2951
Ապահովագրական տեխնիկական պահուստներ	**9349**	**14708**	**12341**	**11943**	**10159**	**9544**	**10095**	**10010**
Տնային տնտեսությունների զուտ ներդրում կյանքի ապահովագրության պահուստներում	0	0	0	0	0	0	0	0
Կանխավճարներ ապահովագրավճարների գծով և պահուստներ չբավարարված պահանջների գծով	9349	14708	12341	11943	10159	9544	10095	10010

[1] Տվյալները նախնական են, ընդգրկված են 8 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:

[2] Տվյալները նախնական են, ընդգրկված են 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011						
	Դ[4]	Հ	Փ[5]	Մ[4,5]	Ա[6]	Մ[6]	Հ[4,5]	Հ[5]
մնացորդներ ժամանակահատվածի վերջի դրությամբ								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***197845***	***181945***	***153778***	***131727***	***93731***	***58651***	***71943***	***110962***
Զուտ արտաքին ակտիվներ (ԿԲ)	453765	427700	414080	421131	387728	375129	403235	428520
Զուտ արտաքին ակտիվներ (ԱԲ)	-229981	-213566	-227207	-257402	-258953	-283206	-298787	-286258
Զուտ արտաքին ակտիվներ (ՎԿ)	-26185	-32256	-33352	-32137	-35605	-33844	-33307	-32141
